Ս.ՇՏԻԿՅԱՆ

ՍԱ ԿԱՐՈՂ ԷՐ ԵՎ ՀԵՔԻԱԹ-ԵՐԳԻԾԱՊԱՏՈՒՄ ԼԻՆԵԼ...

Եթե ստորև ներկայացվելիք շարադրանքիս «գործող անձինք» չլինեին միանգամայն իրական ու հանրածանոթ մարդիկ, և եթե չլիներ ծավալված դեպքերի համախումբը, որոնց գերակշիռ մասը դարձյալ իրականություն է և, հետևաբար, ծանոթ իմ բարեմիտ ընթերցողներին։

... ՈՒսանողներ էինք և սովորում էինք Երևանի Վ.Մ.Մոլոտովի անվան պետական համալսարանի (այդպիսին էր այդ հաստատության լրիվ անվանումը) բանասիրական ֆակուլտետի հայկական բաժնում։ Ի թիվս այլ առարկաների, անցնում էինք ամենակարևորը համարվող և անկյունաքարայինը դիտվող մի առարկա էլ՝ «ՍՄԿԿ պատմություն», որը նախանձելի հմտությամբ ավանդում էր դասախոս Մակիչ Արզումանյանը։ Ինչպես և ծրագրավորված էր ու սպասելի, սկսեցինք Մարքսի ու Էնգելսի համատեղ հեղինակությունը հանդիսացող «Կոմունիստական կուսակցության մանիֆեստից», հանգամանորեն բացահայտեցինք «ծրագրային այդ փաստաթղթի» դերն ու նշանակությունը ամբողջ աշխարհում անդասակարգ հասարակություն կառուցելու գործում, ապա անցանք մարքսիզմի դասականների՝ այդ գրքույկին տրված գնահատականներին։ Վերլուծաբար ներկայացրեցինք Կաուցկու, Պլեխանովի, Լենինի և էլի ուրիշների՝ այս կապակցությամբ ասված մտքերը, ապա կանգ առանք «բոլոր ժամանակների մեծ մտածողի» Իոսիֆ Ստալինի կարծիքների շարադրման վրա, հատկապես կրկնելով նրա այն ասույթը, որ « «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը» մարքսիստական գրականության երգ երգոցն է»։

Ստալինյան այս գնահատական-արտահայտությունը մեծապես տպավորիչ էր հնչում, առավել քան շեշտակի ու նպատակասլաց, բայց գոնե ինձ, այսինքն՝ առաջին կուրսի ուսանողիս համար մնում էր անհասկանալի և հետևաբար մի շարք հարցեր առաջացնող։ Եվ դրանցից թերևս ամենահիմնականը. ինչ բան էր այս «Երգ երգոցը»։ Դատելով անվանումից, այն պետք է որ երաժշտական ստեղծագործություն կամ երգարվեստի մի տեսակ լիներ, գուցեև ժողովրդական ինչ-որ ֆոլկլորային մտածողության դրսևորում, և այս դեպքում ինչ էր ստացվում՝ «ժողովուրդների մեծահանճար առաջնորդը» մարքսիզմի ծրագրային այդ աշխատությունը գնահատելու բարձրագույն չափանիշը համարել էր այդպիսի երգը։

Զարմանալի էր, անհասկանալի ու տարակուսելի...

ՈՒսանողական հետաքրքրասիրությունս իր հագուրդն էր պահանջում, ուստի և ձեռնամուխ եղա առաջին հերթին Ստալինի մտավոր ոլորտը կազմակերպող դասականների աշխատությունների ընթերցմանը: Հանգամանորեն կարդացի Գորկի, Մայակովսկի, Սալտիկով-Շչեդրին... և համապատասխան ոչինչ չգտա: Կարդացի մարքսիզմի հին-նոր ներկայացուցիչներից մեկից ավելի երկասիրությունները, ապա նախանձելի խնամքով ման եկա եվրոպական դասականների գեղարվեստական ստեղծագործությունների անծայրածիր օվկիանոսում: Արդյունքները դարձյալ անմխիթար եղան: Այս հանգամանքը, եթե մի կողմից զայրացնում ու նյարդայնացնում էր ինձ, մյուս կողմից՝ ավելի էր սրում հետաքրքրությունս: Վերջապես ինչ բան է այս անորսալի «Երգ երգոցը»: Ինչ գործ է դա, որն այնպիսի վիթխարի արժեք է ունեցել, որ արժանացել է «մարդկության գերհանճարի» ուշադրությանը: Եվ անհողդողդ հաստատակամությամբ շարունակում ու շարունակում էի փնտրտուքներս...

Հարցը, ինձ համար էլ միանգամայն անսպասելի կերպով, լուծեց մեր համակուրսեցիներից մեկը՝ Լևոն Ներսիսյանը, մեծահամբավ դերասան Հրաչյա Ներսիսյանի որդին: Լսելով իմ խոստովանությունը «Երգ երգոցի» առթիվ կրած տառապանքներիս մասին, նա քահ-քահ ծիծաղեց՝ իրեն այդքան հատկանշական հուժկու-մեֆիստոֆելյան ծիծաղով և դարձավ ինձ:

- Սուրիկ, անտեղի աշխատանք ես կատարել: «Երգ երգոցը» գտնվում է Աստվածաշնչում:

- Որտեղ, որտե՞ղ, – ականջներիս չհավատացի ես:

- Քեզ արդեն ասացի, Աստվածաշնչում: Որևէ տեղից ճարիր «Աստվածաշունչ մատյանը», բովանդակության մեջ կգտնես ուզածդ ու կկարդաս: Ցանկում հենց այդ ձևով էլ նշված է. «Երգ երգոց»:

Խնդիրը ավելի հետաքրքրական և միաժամանակ՝ առավել քան անհասկանալի դարձավ: Իոսիֆ Ստալինը, մեր և բոլոր ժամանակների համար առաջին մարքսիստը, այդ գաղափարաբանության ամենակարկառուն դեմքը իր ասածն ապացուցելու համար Աստվածաշո՞ւնչն էր վկայակոչել: Ով-ով, բայց մենք՝ ուսանողներս, հիանալի գիտեինք, որ մարքսիզմ-լենինիզմը իր գոյության արշալույսից սկսած, անողոք ու անզիջում պայքար էր մղում կրոնի, եկեղեցու ու այդ բնույթի գրականության դեմ, այդ պայքարը մի նոր և էլ ավելի բարձր սկզբունքային աստիճանի վրա բարձրացրեց հենց ինքը՝ Ստալինը և հիմա...

Ստալին, մարքսիզմ և ... Աստվածաշունչ։ Ամեն ինչ իսկապես որ շատ էր տարօրինակ։

Աստվածաշունչ մատյանի մասին դասախոսությունների ժամանակ մեզ մատուցված և միս ու արդյուն դարձած տեսակետ-վերաբերմունքը, ավելորդ է թերևս ասելը, – անվերապահորեն քննադատական ու ժխտողական էր։ Քանզի քաջ գիտեինք, օրինակ, որ «Քննադատությունը բազմիցս ապացուցել էր, որ հանձինս Աստվածաշնչի, մենք գործ ունենք մի ստեղծագործության հետ, որտեղ լի են կոպիտ սխալները, պատմական փաստերի աղճատումները, իրար հետ անհամատեղելի հակասությունները»։

Գիտելիքների այսպիսի «հարուստ» պաշարով զինված, և արդեն նախնական ու խիստ կողմնակալ տրամադրությամբ դաստիարակված, ես ճարեցի-գտա Երուսաղեմում հրատարակված արևմտահայերեն մի Աստվածաշունչ, բացեցի «Երգ երգոց» վերնագրի տակ զետեղված բաժինը, կարդացի մեկ անգամ, երկու, երեք...

Այդ օրը, այսինքն՝ 1951 թ. նոյեմբերի 21-ին, ես հետևյալը գրեցի իմ օրագրում։

«Լևոն Ներսիսյանի ցուցումով կարդացի Աստվածաշնչում զետեղված «Երգ երգոցը»։ Կարծիքս. բանաստեղծական հանգի և հանգավորման կատարյալ բացակայություն, անհեթեթ պատկերներ ու համեմատություններ, ինչքան ասես անհասկանալի տեղանուններ, որոնք միայն շշմեցնում են ընթերցողին և վկայում հեղինակի մտավոր սնանկության մասին»։

Դարի ու ժամանակի իսկական զավակն էի, այնպես չէ՞...

Եվ այս բոլորին հաջորդող իմ միանգամայն մարքսիստական եզրակացությունը. «Երգ երգոցը» մեծ առաջնորդի ուշադրությանն է արժանացել ոչ թե իր գաղափարական՝ խոցելի, բովանդակության պատճառով, այլ բացառապես այն բանի համար, որ պատմական հնություն է։ Այսպես և միայն այսպես պետք է մեկնաբանել ստալինյան հանճարեղ ասույթը «Մանիֆեստի» մասին։

Այսպես մեկնաբանելու պատրաստակամությամբ առլեցուն, ի պատասխան մեր մազախռիվ սեմինարավարի «Ով է ցանկանում սկսել» հարցի, առաջինը ձեռք բարձրացրեցի։

Վերլուծաբար կրկնեցի մարքսիստ և ոչ մարքսիստ մտավորականների կարծիքները «Մանիֆեստի» մասին, ապա,- իհարկե համապատասխան գերադրական պիտակավորումներով, – շարադրեցի նաև ստալինյանը։ Հաղթականորեն ավելացրեցի, որ «Երգ երգոցի» հետ կապված

նրա համեմատությունը միանգամայն իրական հիմք ունի և այն գալիս է Աստվածաշնչից, որտեղ էլ, հենց այդ վերնագրի ներքո գտնվում է այդ գործը։ Երբ այն կարդում ես...

- Սուրեն, դուք Աստվածաշո՞ւնչ եք կարդացել, – կես զարմանք - կես դժգոհությամբ ինձ ընդհատեց սեմինարավարը։

- Այո, իհարկե, – էլ ավելի հաղթական հավաստեցի ես և շարունակեցի միտքս, որ Աստվածաշնչում զետեղված «Երգ երգոցը» գաղափարական առումով խոցելի մակարդակի մի գործ է, որը ոչ մի քննադատության չի դիմանում...

- Սուրեն, – կրկին ինձ ընդհատեց մեր մազախռիվ սեմինարավարը, – դուք իսկապե՞ս Աստվածաշունչ եք կարդացել։

- Այո, այո, – հավատացած, որ իմ գիտելիքներով հիացնում եմ թե սեմինարավարին, և թե համակուրսեցիներիս, կրկին հավաստեցի ես։

- Հետաքրքիր է, – քիչ լռելուց հետո մտազբաղ տոնով հավելեց սեմինարավարը, – ԲՈՒՀ-ի ուսանող եք, կոմերիտական և Աստվածաշունչ եք կարդացել։ Հե-տա-քըր-քիր է ...

Բավական կտրուկ ձևով ընդհատելով նրան՝ շարունակեցի պատասխանս և հավելեցի, որ «Երգ երգոցը» իր գաղափարական առումով չէ, որ հետաքրքրել է «պողպատե առաջնորդին», այլ միայն որպես գրա-պատմական մեծարժեք հնություն, քանզի ...

- Լավ, լավ, վերջացնենք, – արդեն չթաքցված դժգոհությամբ ինձ կասեցրեց սեմինարավարը, – վերջացնենք։

Նստեցի, վստահ, որ իմ պատասխանով հիացրել եմ ներկաներին և պատրաստված ուսանողի տպավորություն ստեղծել մեր մազախռիվ սեմինարավարի վրա։ Ավաղ, չէի էլ կռահում, որ փորձանք եմ հասունացրել ինձ համար...

Մի քանի օր անց դասամիջոցին ինձ մոտեցավ Համալսարանի կոմերիտական կազմակերպության բարձրագույն օրգանի՝ կոմերիտմիության կոմիտեի գործավար Սեդա Կոծինյանը և անվերապահ տոնով հայտնեց, որ հրավիրված եմ կոմիտեի «վաղը կայանալիք» նիստին։ Ինչո՞ւ։ Քննարկվելու է իմ՝ «կոմերիտականին անվայել արարքը»։

Հիշատակված 50-ական թվականներին Պետական համալսարանի կոմերիտմիության կոմիտեն այն օրգանն էր, որի սոսկ անունը զգաստացնում էր ուսանողությանը: Այդ կոմիտեի հերթական նիստերից մեկում էր, օրինակ, որ «անարգանքի սյանը գամվեց» մեր բարեհոգի ու պատրաստակամ քուրդ ուսանող Շկոյե Հասանը, քանզի կոմիտեին «հայտնի էր դարձել», որ նա պարբերաբար այցելում էր «գաղափարական հակառակորդ» ակադեմիկոս Գրիգոր Ղափանցյանին (վերջինս հեռացված էր համալսարանից, ժամանակի «ամենագիտական և մարքսիստական ուսմունքին»՝ մառականությանը հակադրվելու համար): Կոմիտեի նիստերից մեկում էր, որ «սկզբունքային քննադատության» ենթարկվեց բանասիրական ֆակուլտետի ռուսական բաժնի ուսանող Արամ Գրիգորյանը (այժմ՝ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի փոխտնօրեն), որովհետև ոչ միայն կարդացել էր «բուրժուական անկումային գրականության ներկայացուցիչներ» Սերգեյ Եսենինին ու Ալեքսանդր Բլոկին, այլև հայտարարել էր, որ նրանք տաղանդավոր բանաստեղծներ են:

Գաղափարական այսպիսի հաստատուն պահվածք ունեցող բարձրագույն ատյանին էր, ահա, որ «հրավիրված» էի ես, ուստի և ընթերցողներին պետք է հասկանալի լինի ինձ համակած ներքին հուզումն ու հոգեկան անհանգստությունը:

... Կոմիտեի անդամները և հրավիրվածները չարագուշակ կերպով լուռ էին և խստաբարո-կենտրոնացած: Թագավորում էր ծանր, անթափանց մի լռություն, որը հազվագյուտ դեպքում ընդհատվում էր նրանց կարճառոտ շշուկներով: Նստած իմ «մեղադրյալի աթոռին», որն, իհարկե, առանձնացրած էր բոլորից և դրված սենյակի կենտրոնում, նայում եմ ներկաներին, որոնցից շատերին ճանաչում եմ անձամբ, իսկ մի քանիսի հետ էլ նույնիսկ մտերիմ եմ: Նայում եմ և չեմ ճանաչում նրանց խստաբարո դեմքերը...

Խոսք է վերցնում մեր մազախռիվ սեմինարավարը և միանգամից անցնում է «հարձակման»: Նա նշում է, որ իր «կուսակցական պարտք է համարում» տեղեկացնել համալսարանի կոմերիտական կոմիտեի անդամներին վերջին սեմինարի ժամանակ կոմերիտական Սուրեն Շտիկյանի թույլ տված գաղափարապես խոցելի վարքագծի մասին, երբ անդրադառնալով «Մանիֆեստին», նա օգտագործեց առիթը վկայակոչելու ոչ ավել, ոչ պակաս Աստվածաշունչը, ծանրացավ «Երգ երգոցի» վերլուծության վրա, և, որ կատարելապես աններելի էր, այդ ամենն արեց իբր ստալինյան հանճարեղ ասույթը պարզաբանելու համար (զսպված մի շշուկ անցավ ներկաների միջով): Միանգամայն պարզ է, որ Շտիկյանը ոչ միայն ժամանակ էր տրամադրել կարդալու մեր գաղափարախոսությանը անհարիր մի գիրք, – սեմինարի ժամանակ

խոստովանեց հենց ինքը, – այլև օգտագործեց բարեպատեհ առիթը Աստվածաշունչն ու «Երգ երգոցը» պրոպագանդելու համար (դարձյալ զսպված շշուկ անցավ ներկաների միջով)։ Ճիշտ է, նա արեց նաև մի քանի քննադատական դիտողություններ էլ, բայց դրանք հարցադրման էությունը հիմնականում չեն փոխում։

Իմ միայնակ աթոռի վրա նստած-կծկված, վախվորած նայում եմ աջ ու ձախ։ Ելույթների գերակշիռ մասը, նույնիսկ ինչպես հարկն է ընկալել չէի կարողանում։ Հասկանում եմ միայն, որ ոմանք հօգուտ ինձ են արտահայտվում, ոմանք՝ դեմ։ Մտքերի փոխանակությունն ամփոփելու համար ոտքի է ելնում կոմիտեի քարտուղար Կամո ՈՒդումյանը։ Ավելի եմ լարվում ու կծկվում։ Հիմա պիտի վճռվի ամեն ինչ...

- Իհարկե, - հանդարտ ու հանդիսավոր սկսում է նա, – Աստվածաշունչը կարդալու և այն պրոպագանդելու համար, այն էլ սեմինար պարապմունքի ժամանակ, մենք կոմերիտական ուսանող Սուրեն Շտիկյանի գլուխը չենք շոյի։ Բայց այստեղ աչքաթող է արվում մի կարևոր հանգամանք, – ՈՒդումյանը բազմանշանակալից լռեց, – այն, որ մեր ընկերը գաղափարական միանգամայն ճշգրիտ վարքագիծ դրսևորելով, անվերապահորեն քննադատաբար է արտահայտվել թե Աստվածաշնչի, և թե, մանադանդ, «Երգ երգոցի» մասին։ Ահա սա է իսկական կոմերիտականի նկարագիրը, և սա է, որ մենք պարտավոր ենք առաջին հերթին արձանագրել...

Շարունակությունը ես չեմ լսել, ավելի ճիշտ՝ չկարողացա լսել։

Հայք, 1992, № 51, դեկտեմբերի 26